



**Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

**ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ

PEDAGOGY AND SOCIAL SCIENCES

2 (67)

**Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2024

**ՀՈՒՉԱԿԱՆ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ
ՀՈՒՉԱԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋՈՑՈՎ**

**ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼՅԱՆ**

Համառոտագիր

Սույն հոդվածում քննության է առնվում օտար լեզվի, մասնավորապես անգլերենի հաղորդակցական ուսուցման գործընթացում հուզական խոսքային ակտերի ներմուծման հիմնախնդիրը: Հաղորդակցության մեջ խոսքային ակտերը գործաբանական արժեք են ներկայացնում, և կարևոր է իմանալ, թե ինչպես իրականացնել համատեքստից կախված ճիշտ խոսքային ակտ: Օտար լեզվի հանրակրթական դասագրքերում շատ քիչ են խոսքային ակտերի ընկալումը խթանող ուսումնական առաջադրանքները. աշակերտների լեզվահաղորդակցական կարողությունների զարգացման գործում դա լրջագույն խնդիր է: Աշխատանքում մասնավորապես դիտարկվում են հուզական խոսքային ակտերը, որոնք կապող օղակ են խոսողի զգացմունքների և հաղորդակցական նպատակի միջև: Մենք դիտարկել ենք հուզագնահատողական արտահայտությունները (այսուհետ՝ ՀԳԱ)՝ որպես հուզական խոսքային ակտերի ուսուցման լեզվական առանձին միավորներ՝ հաշվի առնելով, որ դրանք հանդես են գալիս որպես միջոց՝ խոսքին հուզարտահայտչական երանգ հաղորդելու, ինչպես նաև ավելի հստակ դարձնելու խոսողի միտքն ու զգացմունքները: Այդ նպատակով աշխատանքում հակիրճ վերլուծում ենք լեզվահաղորդակցական կոմպետենցիան և դրա բաղադրիչները, անդրադարձ ենք կատարում խոսքային ակտերի տեսակներին, ներկայացնում ենք ՀԳԱ-ների դերը հաղորդակցության մեջ և օտար լեզուների դասավանդման գործընթացում: Աշխատանքի վերջում ներկայացվում են վարժությունների տիպեր, որոնք ոչ միայն նպաստում են խոսքային ակտերի և ՀԳԱ-ների ընկալմանը, այլև ուղղորդում են սովորողին դրանք գործածել օտար լեզվում:

Հիմնաբաներ՝ լեզվահաղորդակցական կոմպետենցիա, գործաբանական կոմպետենցիա, խոսքային ակտեր, հուզագնահատողական արտահայտություններ (ՀԳԱ):

Ներածություն

Օտար լեզուների դասավանդման հաղորդակցական մեթոդների ի հայտ գալուն պես կարևորվեց սովորողների հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումը՝ որպես խոսքային գործունեություն

իրականացնելու միջոց: Հաղորդակցական կարողությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում պետք է կարևորել սովորողների գործաբանական կարողությունները, մասնավորապես անդրադառնալ հուզական խոսքային ակտերի դրսևորումներին:

Թեմայի արդիականությունն ու նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է արվել տեսակավորել հուզական խոսքային ակտերը և դրանք համադրել ՀԳԱ-ների հետ, ինչպես նաև մշակել կադապար՝ վերջիններս ներմուծելու օտար լեզուների ուսուցման գործընթացի մեջ:

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել ՀԳԱ-ները՝ որպես հույզեր արտահայտող խոսքային ակտերի արտահայտման միջոց, և մշակել դրանց ուսուցմանն ուղղված առաջադրանքներ: Հետազոտության խնդիրներն են՝ ուսումնասիրել խոսքային ակտերը՝ որպես լեզվահաղորդակցական կոմպետենցիայի գործաբանական բաղադրիչ, անդրադարձ կատարել խոսքային ակտերի դասակարգմանը հաղորդակցության մեջ՝ ըստ դրանց իյրոկուտիվ ներուժի, վեր հանել ՀԳԱ-ների հաղորդակցական նշանակությունը, մշակել ՀԳԱ-ների միջոցով հուզական խոսքային ակտերի ուսուցման վարժությունների համակարգ և հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Ուսումնասիրության տեսական նշանակությունն այն է, որ իրականացվել է հուզական խոսքային ակտերի և ՀԳԱ-ների գործաբանական վերլուծություն՝ ընդհանուր տրամաբանական մեթոդի՝ վերլուծության և համադրության միջոցով: Իբրև արդյունք՝ ստացել ենք հուզական խոսքային ակտերի դասակարգման աղյուսակ՝ գուգորդված համապատասխան ՀԳԱ-ներով և անգլերենից բերված օրինակներով:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ թիրախային միավորների ընկալմանն ու գործածմանն ուղղված առաջադրանքները կարելի է կիրառել օտար լեզվի ուսուցման գործընթացում՝ սովորողների՝ գրագետ հուզական խոսքային ակտեր իրականացնելու կարողությունները խթանելու համար:

Խոսքային ակտերը հաղորդակցության մեջ

Եվրոպական ժամանակակից կրթության հիմնարար փաստաթղթում՝ «Լեզուների իմացության իրազեկության համաեվրոպական համակարգում» (CEFR) առանձնացվում են լեզվահաղորդակցական կոմպետենցիայի երեք բաղադրիչներ՝

- լեզվական (linguistic),
- հանրալեզվաբանական (sociolinguistic),
- գործաբանական (pragmatic):

Լեզվական կոմպետենցիան ձևավորվում է բառապաշարային, հնչյունաբանական, շարահյուսական գիտելիքների և ունակությունների միջոցով: Հանրալեզվաբանական կոմպետենցիան ներառում է լեզվի կիրառման սոցիալ-մշակութային բաղադրիչը: Այն վերաբերում է հաղորդակցման որոշակի ռազմավարությունների,

որոնց շնորհիվ խոսողը սոցիալական շփման ընթացքում հաղթահարում է ի հայտ եկած դժվարությունները՝ հաղորդակցումն արդյունավետ դարձնելու նպատակով: Վերոնշյալի ակնառու օրինակ է այն իրավիճակը, երբ խոսակիցը, չկարողանալով մտաբերել անհրաժեշտ բառը, բացատրում է այն տվյալ բառին մոտ իմաստներ արտահայտող այլ բառերի և բառակապակցությունների միջոցով: Գործարանական կոմպետենցիան վերաբերում է ասույթի՝ և՛ ձևի, և՛ իմաստի առումով համապատասխանությանը համատեքստին (Canale, 1983, p.7): Գործարանությունն ուսումնասիրում է ասույթի իմաստը՝ կախված նրանից, թե լեզվական ինչ համատեքստում է այն կիրառվել: Այստեղից կարելի է ենթադրել, որ գործարանության խնդիրը խոսողի մտադրությունը որոշակի համատեքստում լավագույն կերպով ներկայացնելն է: Այն ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են փոխկապակցված մտքերը, պատշաճ ոճը (պաշտոնական/ոչ պաշտոնական), տեքստի տեսակը (շարադրություն, պաշտոնական նամակ, դիմում և այլն), խոսողական ակտերը (խնդրանք, մերժում, բողոք, կարեկցանք և այլն), լեզվական կաղապարները (խոսքային պարզ գուգակցություններ՝ հարց ու պատասխան, ողջույն և պատասխան ողջույն):

Յուլը գտնում է, որ լեզուն գործարանության միջոցով սովորելու առավելությունն այն է, որ խոսելիս կարելի է արտահայտել մտադրություն, նպատակ, ենթադրություններ և գործողության այն տեսակը, որը խոսողը ցանկանում է իրականացնել (օրինակ՝ խնդրանք) (Yule, 1996, p.4):

Յուլը խոսողական կամ խոսքային ակտը սահմանում է որպես ասույթի միջոցով իրականացված գործողություն, որը կարելի է բնութագրել հատուկ անվանումներով, ինչպես օրինակ՝ ներողության հայցում, բողոք, հաճոյախոսություն, հրավեր, խոստում կամ խնդրանք (Yule, 1996, p.47): Խոսքային ակտերի տեսությունը, որը գործարանության մեջ առաջին հիմնական տեսությունն է, առաջ է քաշել Օստինը նախորդ դարի 60-ական թվականներին, այնուհետև լայն քննարկումների արժանացել այլ լեզվաբանների կողմից: Օստինը ցանկանում է ցույց տալ խոսքի գործարանական արժեքը, այսինքն՝ այն, որ խոսքն իրենից ներկայացնում է որոշակի գործողություն և կարող է ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Ըստ նրա՝ խոսողն ասույթի միջոցով կատարում է գործողություն երեք մակարդակներում՝

ա) *լոկուտիվ* (խոսողական),

բ) *իլլոկուտիվ* (խոսողական-կատարողական)

գ) *ալերլոկուտիվ* (խոսողական-ներգործական) (Austin, 1962, p.

98-107):

Լոկուտիվ կամ խոսողական ակտը նախադասությունն արտաբերելու գործողությունն է, որը արտահայտում է իմաստ և ունի հասցեատեր: *Իլլոկուտիվ կամ խոսողական-կատարողական ակտը* մտքի արտահայտման գործարանական բաղադրիչն է և վերաբերում է տվյալ նախադասության հաղորդակցական նպատակին՝ պնդում,

խոստում, առաջարկ, խնդրանք, մերժում, կարեկցանք, բողոք և այլն: *Պերրոկուտիվ կամ խոսողական-ներգործական ակտը* արտաբերված նախադասության ազդեցությունն է հասցեատիրոջ վրա, այսինքն՝ վերջինիս արձագանքը (Levinson, 1983, p.236): Այսպես, օրինակ, եթե խոսողն ասում է «Տեղ հասնելուն պես զանգահարի՞ր ինձ», ապա այս նախադասությունն իր հնչունական և շարահյուսական կառուցվածքով խոսողական ակտ է: Այն նպատակը (հրաման, խնդրանք կամ հորդոր), որ խոսողը մտադիր է արտահայտել տվյալ նախադասությամբ, վերջինիս խոսողական-կատարողական ակտն է: Իսկ այն, թե ինչպես է արձագանքում խոսքի հասցեատերն իրեն ուղղված հրամայական նախադասությամբ՝ կհամաձայնի, կխոստանա թե կմերժի զանգահարել, խոսողական-ներգործական ակտն է:

Որոշ լեզվաբաններ (Yule, 1996, p. 53-54, Searle, 1976, p. 10-13) խոսքային ակտերը դասակարգում են՝ համաձայն դրանց իլլոկուտիվ ներուժի՝ առանձնացնելով հետևյալ հինգ կատեգորիաները՝

ա) *ասերտիվներ* կամ *հաստատման ասույթներ* (assertives/representatives),

բ) *դեկլարատիվներ* կամ *հրապարակային ասույթներ* (declaratives),

գ) *էքսպրեսիվներ* կամ *հուզական ասույթներ* (expressives)

դ) *դիրեկտիվներ* կամ *հրահանգային/հորդորման ասույթներ*

(directives)

ե) *կոմիսիվներ* կամ *հանձնառության/պարտականության ստանձնման ասույթներ* (commissives):

Խոսքային ակտերի այսպիսի դասակարգումը թերևս լեզվաբան-մեթոդաբանների շրջանում ամենից ընդունելի տարբերակն է: Դասակարգման յուրաքանչյուր բաղադրիչ իր մեջ ներառում է ասույթի մի շարք տեսակներ, որոնք առօրյա խոսքում շատ հաճախ ենք օգտագործում: Կարծում ենք՝ անհրաժեշտություն է օտար լեզվի ուսուցման մեջ ներմուծել տարաբնույթ ասույթների վերաբերյալ ուսումնական նյութեր, որոնց շնորհիվ սովորողը պատկերացում կկազմի, թե հաղորդակցական ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորել լեզվական որոշակի իրադրությունում: Ինչպես Մրոլն է նշում, ուսումնական ծրագրերում տեղ են գտնում «բավականին սահմանափակ քանակով գործողություններ, որ մենք կատարում ենք լեզվի միջոցով» (Searle, 1976, p. 22-23), մինչդեռ հնարավոր գործողությունները բազմաթիվ են:

ՀԳՎ-ները՝ որպես խոսքային ակտերի արտահայտման միջոց

Խոսքային ակտերը իրականացվում են տարբեր իրավիճակներում, և կարելի է ասել, որ դրանց միջոցով է խոսողը հասնում իր հաղորդակցական նպատակին: Ավելորդ է նշել, որ խոսքային ակտերի ներառումն օտար լեզուների դասավանդման ծրագրերում անհրաժեշտություն է: Այնուհանդերձ, պետք է նկատել, որ պետական դասագրքերում տեղ գտած ուսումնական նյութերը հիմնականում ընդգրկում են տեղեկատվական բնույթի տեքստեր, իսկ ինչ վերաբերում է խոսքային ակտերի մյուս տեսակներին (հուզական,

հրահանգային, նախաձեռնողական, հրապարակային ասույթներ) և դրանց արտահայտման միջոցներին, ապա կարելի է ասել, որ դրանց անդրադարձ է կատարվում հպանցիկ: Կարծում ենք՝ մեծ անհրաժեշտություն կա մշակելու ուսուցման այնպիսի նյութեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի սովորողին ծանոթացնել օտար լեզվով գրագետ խոսքային ակտեր իրականացնելու միջոցներին:

Էքսպրեսիվները խոսքային ակտերի այն տեսակն են, որոնք արտահայտում են խոսողի զգացմունքները իր կամ աշխարհի վերաբերյալ (Searle, 1976, p.12): Այս տեսակի խոսքային ակտեր իրականացնելիս ընդունված է խոսքին հուզարտահայտչական երանգ տալ: Այդ նպատակով խոսողն օգտագործում է միջարկություններ կամ ձայնարկություններ՝ զգայական վերաբերմունք (հիացմունք, ուրախություն, զարմանք, ցավ ու վիշտ, զգվանք և այլն) արտահայտող բառեր, որոնք Գրիգորյանը և Ղահրամանյանը սահմանում են որպես ՀԳԱ-ներ: Հեղինակների գնահատմամբ՝ ՀԳԱ-ները օժտված են կիրառական - շարահյուսական առանձնահատկություններով, դրանք նախադասության անդամ չեն դառնում, սովորաբար վերաբերում են ոչ թե մեկ անդամի, այլ ամբողջ նախադասությանը՝ հաղորդելով զգացական վերաբերմունքային այս կամ այն երանգը և այսպիսով խոսքը հագեցնելով հուզականությամբ ու արտահայտչականությամբ (Գրիգորյան, 2017, Ղահրամանյան, էջ 46-47): Կրելով մի դեպքում հուզական, մյուս դեպքում՝ գնահատողական-արտահայտչական, իսկ երրորդում՝ զգացական-հաղորդակցական իմաստ՝ դրանք կարող են միայն գործաբանական առնչություն ունենալ նախադասությանը, քանի որ անմիջականորեն արտահայտում են խոսքի հաղորդակցական նպատակը.

- Ա՛խ, թանկագի՛նս, ներողամի՛տ եղեր հիմարիս հանդեպ:

Oh, you wanted to add something. I am sorry to have interrupted you.

They have arrived too late, alas!

Now it is time for us to part, alas, alas!

Գրիգորյանը անդրադարձ է կատարել ՀԳԱ-ների կարևորությանն օտար լեզուների դասավանդման գործընթացում: Նա պնդում է, որ ՀԳԱ-ներն իրենց իմաստային առանձնահատկությամբ խիստ տարբերվում են լեզվի մյուս միավորներից: Այդ տարբերությունն արտահայտվում է նրանով, որ դրանք ոչ միայն հասկացություններ են արտահայտում, այլև ընդհանուր անորոշ ձևով դրսևորում են խոսողի զգացումն ու կամքը: Այս առումով միջլեզվական հաղորդակցման ժամանակ դրանք ըմբռնելի են դառնում անգամ տվյալ լեզուն չիմացող գրուցակիցների համար (Գրիգորյան, 2016, էջ 96): Այդ իսկ պատճառով կարելի է ասել, որ հաղորդակցական մոտեցման տեսանկյունից ՀԳԱ-ները կատարում են նաև հանրալեզվաբանական գործառույթ և հանդես գալով նախադասությանը կից՝ ավելի հստակ և հասանելի են դարձնում խոսողի միտքն ու զգացմունքները:

Հաշվի անելով ՀԳԱ-ների հաղորդակցական նշանակությունը՝ էքսպրեսիվների դասին պատկանող խոսքային ակտերն ուսուցանելիս

կարևոր ենք համարում, ըստ անհրաժեշտության, սովորողներին ներկայացնել նաև համապատասխան կիրառության ՀԳԱ-ներ: Թեպետև և տարբեր ՀԳԱ-ներն իրենց արտահայտչականության շնորհիվ հասկանալի են օտար լեզվով խոսողներին, բայց և այնպես ամեն լեզու ունի իրեն հատուկ իմաստային ենթաշերտերը: Ահա թե ինչու, ընդհանուր առմամբ հասկանալի լինելով հանդերձ, օտար լեզու դասավանդելիս ակնառու է դառնում, որ դասավանդման ընթացքում ուսանողները դժվարանում են դրանք գործածել: Պատճառն այն է, որ ՀԳԱ-ները սահմանվում են կիրառության շնորհիվ: Յուրաքանչյուր ՀԳԱ ընկալվում է որպես այդպիսին՝ լեզվամշակութային և համատեքստային կոնկրետ իրավիճակում բազմակի կիրառությունների շնորհիվ: Հաճախ համարվում է, որ ՀԳԱ-ների հիմնական գործառնությունը հույզեր արտահայտելն է, օրինակ՝ վիշտ և ավիստանք, գարմանք և այլն (alas, oh): ՀԳԱ-ները, այնուամենայնիվ, կարող են ունենալ նաև այլ գործառնություններ, օրինակ, ողջույնի և հրաժեշտի (hello, goodbye), ուշադրության (hey, say), պատասխանի ձևեր (yes, no, okay, mhm), հրամաններ (psst, sh, hush), հայիոյանք և երդում արտահայտող բառեր (gosh, gee, Christ, damn, bloody hell), որոնք պարունակում են զգացական վերաբերմունքի տարրեր և ունեն օգտագործման բարձր հաճախականություն (Գրիգորյան, 2016, էջ 96-97): Կարելի է ասել, որ ՀԳԱ-ները հուզական խոսքային ակտեր իրականացնելու արտահայտչամիջոցներ են: Խոսողը գիտակցաբար օգտագործում է որոշակի ՀԳԱ՝ կախված նրանից, թե ինչպիսի խոսքային ակտ է իրականացնում և ինչ նպատակ ունի: Ըստ Էուլթյան, բացականչական ձայնարկություններն արտահայտում են մեր զգացմունքները՝ անկախ լեզվից և մշակույթից: Վերլուծելով հուզական խոսքային ակտերը և ՀԳԱ-ները՝ ստացանք այն պատկերը, որ ՀԳԱ-ների կիրառությունը բխում է խոսողի զգացմունքներից և ասույթի նպատակից: Ստորև ներկայացված է այնպիսի ՀԳԱ-ների ցանկ, որոնք կիրառվում են համապատասխան խոսքային ակտեր իրականացնելիս:

Աղյուսակ 1. ՀԳԱ-ներով արտահայտված հուզական խոսքային ակտեր

Խոսքային ակտ	ՀԳԱ	Օրինակներ անգլերենում
Ավիստանք	alack (ավաղ, ավիսու) alas (ավաղ, ցավոք) oops	Alack, I can't go there. For many people, alas, hunger is a part of everyday life. Oops, I shouldn't have said that.
Մերողություն	eep (վայ, կներես) oh sorry oops	Eep! I didn't mean to say that! Oh, you wanted to add something. I am sorry to have interrupted you. Oops, I knocked over

		your cup!
Չգուշացում	look out! (զգուշ)	Look out! A car is coming at you!
Չարմանք, անսպասելիություն	oops վայ, օյ gee (այ քեզ բան) oh whoa oops gosh (այ քեզ բան)	Oops, I almost spilled the wine. Gee, I don't remember meeting him either. Oh, my dear, remember what we've just heard! Whoa, I just looked at it and it broke! Gosh, is that the time?
Ողջոյն և հրաժեշտ	hello, goodbye	Hello, friends!
Հայիոյանք և երդում	gosh, gee, christ, damn, bloody hell damn it! drat (գրողը տանի)	Darn it! I've lost my keys! Oh, drat, I forgot my key.
Համակրանք, զմայլանք, հուզմունք	gee my! Oh	Gee, Linda looks great at fifty! My! Just look at those lovely cakes! Oh, how nice!
Օրհնանք	god bless	God bless them and make them his servants!
Ուշադրություն	hey, say, look, listen	Listen! Look here!
Պատասխանի ձևեր	yes, no, okay, mhm	Mhm, I don't know.
Հրամաններ	psst, sh, hush	Sh, the baby is sleeping.
Վիշտ, ցավ, տառապանք	oww damn!	Oww, I hit my thumb. Damn! I lost all I had! Damn it all, it's your studio. That's his look-out.
Դժգոհություն, անբավականություն, ն, բարկություն	argh bah boo tsk-tsk	Argh, the car won't work! Bah, I never liked him anyways. Boo, get off the stage! Tsk-tsk, he is late for work again.
Ծաղր, հեգնանք, քնծիծաղ	ooh-la-la! Oh	A seven-layer wedding cake? Ooh-la-la! Oh, you wanted sugar, not milk.
Սարսափ, երկյուղ, վախ	oh jesus! Yikes	Oh, dear! What have they done to your eyes! Jesus! Why are you wearing that scary mask?

		Yikes! This spider is big.
Չզվանք, խորշանք, տհաճություն, արհամարհանք	ewww yuck/ich/ick what a... gak (թուհ)	Ewww, this apple is rotten! Yuk, I wouldn't want to touch that! What a damned Epicurean rascal is this! Gak! There she is again.
Ուրախություն, հրճվանք, բավականություն, բավարարվածություն ւն	cheers what, ho! hurray (hooray, huzzah) hot dog! (ջան)	Cheers, she said, raising her glass. What, ho! God bless your house here! Hurray! She's here at last. Hot dog! I've finally found smth I can do that they can't.
Անտարբերություն, համակերպում, հուսահատություն	meh huh	Meh, whatever you think is best. So she dumped you, huh? Huh, you were right.
Իրոխտանք, պարծանք, Իրախուսանք	how... bravo good!	How brave of you! How honest you are! Bravo! I knew you would in this competition. Good! Keep going like this and you will win a gold medal in athletics.
Երկմտանք	Errr	Errr, I actually don't know.

Անշուշտ, ձայնարկություններն այս նշանակություններով չեն սահմանափակվում, քանի որ դրանք մեծ կախում ունեն հնչերանգային մեկնաբանությունից ևս: Մյուս կողմից էլ, դրանք շատ դեպքերում պայմանավորված են շարահյուսական շրջապատով ընդհանրապես և նախադասությունից նախադասություն տարբեր են լինում: Օրինակները վերցված են հայ և քրիտանական գեղարվեստական գրականությունից, նաև ազգային համապատասխան կորպուսներից:

Ինչպե՞ս սովորեցնել ՀԳԱ-ները

Հիմք ընդունելով այն հետազոտությունները (Olshtain & Cohen 1990; Ellis 1992; King and Silver 1993), որոնք ապացուցել են խոսքային ակտերի ուսուցման արդյունավետությունը հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացում, կարող ենք պնդել, որ անհրաժեշտ է հանրակրթական դպրոցի օտար լեզվի ծրագրերը համալրել նմանատիպ նյութերով: Էքսպրեսիվները և ՀԳԱ-ները դասակարգելու հետ մեկտեղ անհրաժեշտ է մշակել տեքստեր, առաջադրանքներ, վարժանքներ, որոնց շնորհիվ սովորողը

կկարողանա ճանաչել և կիրառել որոշակի ՀԳԱ-ներ՝ հաղորդակցության նպատակին համապատասխան խոսքային ակտ իրականացնելու համար: Ստորև ներկայացված են առաջադրանքներ, որոնց միջոցով հնարավոր է սովորեցնել հուզական խոսքային ակտերի արտահայտման որոշ ձևեր:

Վերլուծական առաջադրանք

Հույզեր արտահայտող խոսքային ակտերի վերաբերյալ սովորողների իրազեկությունը բարձրացնելու նպատակով կարելի է օգտագործել վերևում տրված դասակարգումը, որի շուրջ հնարավոր է կազմել տարատեսակ առաջադրանքներ, ինչպես օրինակ ստորև ներկայացված վարժությունը:

ա) Գտե՛ք և ընդգծե՛ք հուզագնահատողական արտահայտությունները:
բ) Ի՞նչ են արտահայտում հուզագնահատողական հետևյալ արտահայտությունները՝ ուշադրության գրավում, զարմանք, հիացմունք, քաջայերում, վախ, ներողություն, ցավ:

a) In the following sentences, identify the underlined emotional-attitudinal expressions and circle it.

b) What are the underlined emotional-attitudinal expressions used for?
- to express *attracting attention, surprise, admiration, encouragement, fear, apology, pain.*

1. Hey! Were you the one who cheated on the exam? _____
2. Wow, that is the prettiest dress I have ever seen in my life! _____
3. Oh my god! Who is in your house? Is it a thief? _____
4. Well done! You got the highest score in the whole school.

Գիտելիքը ամրապնդող առաջադրանքներ

Երբ սովորողներին արդեն ներկայացվել է համապատասխան նյութը, անհրաժեշտ է վարժությունների միջոցով ամրապնդել ձեռք բերված գիտելիքը: Վարժությունները, որնցում պետք է լրացնել բաց թողնված տեղերը, բազմակի ընտրությամբ հարցերը և համապատասխանեցումը արդյունավետ միջոցներն են այդ նպատակի համար:

Fill in the gap with the appropriate expressions.

Լրացնել բաց թողնված արտահայտությունները երկխոսությունների մեջ:)

Hello / Alas / Um / Hurray / Oops / Darn it! / Shh / Ew / Wow/ Good / Look out / Ouch

- a) _____, I am Sarah Simpson, your new Math teacher.
- b) For many people, _____, hunger is a part of everyday life.
- c) "How many students are there at your university?"
" _____, I'm not sure. I think around 2,000 - but I'll have to check the website."
"I banged my knee on the corner of the table."

Գերախաղ (role-play).

Գերախաղերը կարևոր դեր են կատարում խոսքային կարողությունների զարգացման հարցում: Գերային խաղերի օգնությամբ հայերենի և անգլերենի ՀԳԱ-ների համեմատական վերլուծության և բազմակի գործածությունների շնորհիվ բարձրանում է սովորողի ըմբռնման մակարդակը ՀԳԱ-ների իմաստային առանձնահատկությունների և հուզական խոսքային ակտերի նկատմամբ:

Գիտելիքն ամրապնդող առաջադրանքներ կատարելուց հետո անհրաժեշտ է զարգացնել խոսքային կարողությունները: Օգտակար կլինի երկխոսությունները քննարկելուց հետո սովորողներին հանձնարարել զույգերով ներկայացնել դրանք, ապա ստեղծել և ներկայացնել սեփական օրինակները:

Ա) Գերախաղի միջոցով զույգերով ներկայացրեք հետևյալ երկխոսությունները:

1. "Were you able to get tickets to the football game?"
"Yes - I got the last two before they sold out!"
"Hurray! I can't wait!"
2. "Oops, I just spilled my soda all over the table."
"I'll get some paper towels to clean it up."
3. "My son got a full scholarship to Harvard!"
"Wow, good for him! What's he going to study?"
4. "Ouch!"
"What happened?"
"I banged my knee on the corner of the table."

Բ) Կազմե՛ք և ներկայացրե՛ք ևս երկու նմանատիպ իրավիճակներ՝ օգտագործելով հուզագնահատողական արտահայտություններ:

Նմանօրինակ վարժությունները մեծ խթան կարող են լինել սովորողների՝ լեզվի առանձնահատկությունների ընկալման հարցում: Սովորողները այս կերպ կարող են կատարել համատեքստի վերլուծություն, օգտագործել լեզվական և գործարանական գիտելիքները՝ սեփական մտքերը իրավիճակին համապատասխան ձևակերպելու համար:

Եզրակացություն

Այսպիսով, սույն հոդվածում քննության առնվեց հաղորդակցական ուսուցման գործընթացում հուզական խոսքային ակտերի ներմուծման հիմնախնդիրը: Մենք դիտարկեցինք խոսքային ակտերը՝ որպես կարևոր բաղադրիչ գործարանական կոմպլեքսների ձևավորման գործընթացում: Դիտարկեցինք խոսքային ակտերի տեսակները՝ համաձայն դրանց իյուկուտիվ ներուժի: Այդ դասակարգումից առանձնացրինք հուզական խոսքային ակտերը և դիտարկեցինք դրանց առանձնահատկությունները: Ներկայացվեց ՀԳԱ-ների բնութագիրը՝ որպես էքսպրեսիվ խոսքային ակտերի արտահայտման միջոց: Վերլուծության և համադրության միջոցով

ստեղծեցինք հուզական խոսքային ակտերի և ՀԳԱ-ների աղյուսակ՝ գուգորդված անգլերենից բերված համապատասխան օրինակներով: Մշակեցինք առաջադրանքներ՝ նպատակաուղղված բանավոր խոսքում ՀԳԱ-ների կիրառությանը՝ հուզական խոսքային ակտեր իրականացնելու նպատակով:

Ուսումնասիրության արդյունքում եկանք այն եզրակացության, որ օտար լեզուների դասավանդման գործընթացում լեզվական կարողություններից գատ, կարիք կա անդրադառնալու սովորողների գործարանական կարողություններին, էքսպրեսիվ (հուզական) խոսքային ակտերին: Կարծում ենք՝ անհրաժեշտ է սովորողներին ուսուցանել ՀԳԱ-ներ մի կողմից, և խոսքային ակտեր իրականացնելու ռազմավարություններ մյուս կողմից՝ այդպիսով նպաստելով նրանց լեզվագործարանական կարողությունների զարգացմանը: Ուզում ենք հավատալ, որ մեր մշակած աղյուսակը և վարժությունները կարող են օգտակար լինել օտար լեզու դասավանդողների համար այդ նպատակին հասնելու ճանապարհին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱԿ REFERENCES

1. Գրիգորյան Գ. (2016), Հայերենում և անգլերենում հուզագնահատողական արտահայտությունների իմաստային առանձնահատկությունների մեկնաբանման որոշ մեթոդական հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, էջ 96-104:
Grigoryan G. (2016) Hayerenowm & anglerenowm howzagnahatoghakan artahaytowt'yowwneri imastayin ar'and'nahatkwot'yowwneri meknabanman orosh met'odakan harcer: Gitakan hodvac'neri jhoghovac'ow, H. Atwar'yani anvan lezvi institowt, Erevan, e'j 96-104:
(in Armenian)
2. Գրիգորյան Գ., Դահրամանյան Ս. (2017) Հայերենի և անգլերենի հուզագնահատողական արտահայտությունների իմաստակառուցվածքային շերտերը. ՀԳԱ-ների դիրքն ու ամբողջականությունը: Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Մանկավարժություն և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, «Չանգակ» հրատ., Երևան, էջ 46-49:
Grigoryan G., Ghahramanyan S. (2017) Hayereni & anglereni howzagnahatoghakan artahaytowt'yowwneri imastakar'owcvac'qayin shertery'. HGA-neri dirqn ow amboghjakanowt'yowwny': X. Abovyani anvan haykakan petakan mankarjshakan hamalsaran, Mankavarjhowt'yown & hogewanowt'yan himnaxndirner, Mijbowhakan konsorciowmi gitakan handes, «Zangak» hrat., Erevan, e'j 46-49: (in Armenian)
3. Austin, J. L. (1962). Speech acts. Oxford, p. 98-107.

4. Canale, M. (1983). From Communicative Competence to Communicative Language Pedagogy. In J. C. Richard, & R. W. Schmidt (Eds.), *Language and Communication*. London: Longman, p. 2-14.
5. Levinson, S. C. (1983). *Pragmatics*. Cambridge: Cambridge University Press. 236 p.
6. Searle, J. R. (1976). A classification of illocutionary acts. *Language in Society*, 5(1), p. 1-23.
7. Yule, G. (1996). *Pragmatics*. Oxford university press: p. 4-54.

GOHAR GRIGORYAN, LILIT MANVELYAN - TEACHING EXPRESSIVE SPEECH ACTS THROUGH EMOTIONAL - ATTITUDINAL EXPRESSIONS

Keywords: *communicative language competence, pragmatic competence, speech acts, emotional-attitudinal expressions (EAEs)*

The present article explores the integration of expressive speech acts in the communicative learning process of a foreign language, primarily English. Speech acts play a significant pragmatic role in communication, and understanding how to perform them appropriately according to the context is essential. However, many general education textbooks for foreign languages lack activities that help learners perceive and use speech acts effectively, which hinders the development of their communicative skills.

The paper specifically focuses on expressive speech acts, which bridge the speaker's emotions and the communicative intent. We view emotional-attitudinal expressions as distinct linguistic units for teaching expressive speech acts, for they serve as a tool for infusing an emotional tone into speech and elucidating the speaker's thoughts and feelings. To address this, we provide a brief analysis of communicative language competence and its components, discuss various types of speech acts, and highlight the importance of emotional-attitudinal expressions in both communication and foreign language learning.

The article concludes with a set of exercises designed to enhance learners' understanding of speech acts and emotional-attitudinal expressions, guiding them towards effective use in foreign language communication.

ГОАР ГРИГОРЯН, ЛИЛИТ МАНВЕЛЯН - ОБУЧЕНИЕ ЭКСПРЕССИВНЫМ РЕЧЕВЫМ АКТАМ С ПРИМЕНЕНИЕМ ЭМОЦИОНАЛЬНО-ОЦЕНОЧНЫХ ВЫСКАЗЫВАНИЙ

Ключевые слова: коммуникативно-языковая компетенция, прагматическая компетенция, речевые акты, эмоционально-оценочные высказывания (ЭОВ).

В настоящей статье рассматривается проблема внедрения экспрессивных речевых актов в процесс коммуникативного обучения иностранному языку, в частности английскому. В общении речевые акты имеют прагматическое значение, и представляется важным учитывать контекст при употреблении того или иного речевого акта. В общеобразовательных учебниках по иностранному языку очень мало учебных задач, стимулирующих восприятие речевых актов. Это является серьезной проблемой в развитии языковых коммуникативных способностей учащихся. В частности, в работе рассматриваются экспрессивные речевые акты, которые связывают чувства говорящего и коммуникативную цель. Эмоционально-оценочные высказывания мы рассматривали как отдельные лингвистические единицы для обучения эмоциональным речевым действиям, учитывая, что они придают речи соответствующий эмоциональный тон, а также служат средством для уточнения мыслей и чувств говорящего. С этой целью в работе приводится анализ языковой коммуникативной компетенции и ее компонентов, уделяется внимание типам речевых действий, роли эмоционально-оценочных высказываний в общении и в процессе обучения иностранным языкам. По итогам исследования разработаны модели упражнений, которые не только способствуют пониманию речевых актов и эмоционально-оценочных высказываний, но и помогают обучающемуся правильно употреблять их в речи.

Ներկայացվել է՝ 20.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 07.05.2024 թ.
21.05.2024 թ.